ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2024

«Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 10-ին հրավիրված արտահերթ նիստի: Նիստին մասնակցեցին հանձնաժողովի չորս անդամ և քարտուղարը:

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

Հանձնաժողովի նիստի սկիզբը՝ 2024 թվականի ապրիլի 10, ժամը 17:30

1. Արաքսիա Սվաջյան — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
2. Թամարա Սարգսյան — Նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
3. Ստալ Սարդարյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/
4. Թամարա Գյոզալյան — Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
6. Կարինե Բաբայան — Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի անդամ, բացող/
5. Ռուզան Սաֆարյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հարց 1. «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների «Ֆրանսերեն 7», «Արվեստ 7», «Ռուսաց լեզու 8», «Ֆրանսերեն 8», «Արվեստ 8», «Հայոց պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Ֆրանսերեն 10», «ԹԳՀԳ 10» և «Արվեստ 10» առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին:

Հարց 2. Նշված առարկաների դասագրքերի ստեղծման հայտահրավերների տեքստերի նախագծերի քննարկում, հաստատում, armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով տեքստի հրապարակում:

Հարց 3. Հաջորդ նիստի ժամանակացույցի հաստատում:

Օրակարգի 1-ին հարց.

«Հանրակրթության պետական նոր չափորոշչի» ներդրմամբ պայմանավորված՝ 2024 թվականի ապրիլի 8-ին կայացած 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների նոր դասագրքերի ստեղծման նպատակով Նախարարության կողմից հայտարարված **«ՀՀԿԳՄՍՆԴՄ-0001146», «ՀՀԿԳՄՍՆԴՄ-00001146», «ՀՀԿԳՄՍՆԴՄ-000001146» «ՀՀԿԳՄՍՆԴՄ-0000001146» և «ՀՀԿԳՄՍՆԴՄ-00000001146»** ծածկագրերով դրամաշնորհային մրցույթների մասնակիցների կողմից armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգում մուտքագրված հայտերի բացումը: Մրցութային հանձնաժողովի կողմից կատարվեց ներկայացված փաթեթների ուսումնասիրություն: Արդյունքում պարզ դարձավ, որ 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների «Ֆրանսերեն 7», «Արվեստ 7», «Ռուսաց լեզու 8», «Ֆրանսերեն 8», «Արվեստ 8», «Հայոց պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Ֆրանսերեն 10», «ԹԳՀԳ 10» և «Արվեստ 10» առարկաների դասագրքերի ստեղծման հայտեր չի ներկայացվել: Նախարարությունում խնդիրը քննարկվեց:

2024-2025 ուստարում սովորողներին ուսպլանով նախատեսված բոլոր դասագրքերով ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով հարցի կարևորությունը՝

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների «Ֆրանսերեն 7», «Արվեստ 7», «Ռուսաց լեզու 8», «Ֆրանսերեն 8», «Արվեստ 8», «Հայոց պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Ֆրանսերեն

10», «ԹԳՀԳ 10» և «Արվեստ 10» առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարել նոր դրամաշնորհային մրցույթներ:

Օրակարգի 2-րդ հարց.

Ներկայացվեց և մրցութային հանձնաժողովի կողմից քննարկվեց 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների «Ֆրանսերեն 7», «Արվեստ 7», «Ռուսաց լեզու 8», «Ֆրանսերեն 8», «Արվեստ 8», «Հայոց պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Ֆրանսերեն 10», «ԹԳՀԳ 10» և «Արվեստ 10» առարկաների դասագրքերի ստեղծման հայտահրավերների տեքստերի նախագծերը, որը հավանության արժանացավ:

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. Հաստատել 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների «Ֆրանսերեն 7», «Արվեստ 7», «Ռուսաց լեզու 8», «Ֆրանսերեն 8», «Արվեստ 8», «Հայոց պատմություն 10», «Ռուսաց լեզու 10», «Ֆրանսերեն 10», «ԹԳՀԳ 10» և «Արվեստ 10» առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցույթի մասին հայտահրավերների տեքստերը և 2024 թվականի ապրիլի 11-ին մուտքագրել armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ:
2. Իրազեկել հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտահրավերը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքէջում:
3. Հաջորդ նիստն անցկացնել ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի նախագահ — Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ — Թամարա Սարգսյան

Ստալ Սարդարյան

Թամարա Գյոզալյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովների քարտուղար՝ — Ռուզան Սաֆարյան